# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<30>> նոյեմբերի 2012թ. N: 167 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 63 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 844-Ն որոշման հավելվածի 3-րդ, 5-րդ կետերի դրույթները.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հուլիսի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին>> N 63 կարգադրությունը:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի
2012 թվականի նոյեմբերի <<30>>-ի
N 167 կարգադրության

## ԿԱԶՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Խաչատուր Պողոսյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի նախագահ.

Նորիկ Գրիգորյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ.

Հակոբ Հարությունյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ, հանձնաժողովի անդամ.

Տիգրան Ղարիբյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, հանձաժողովի անդամ.

Ժաննա Պետոյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ